

կան սրբութեան, ամենայն իրաւամբ այս տեղ ևս հաւատարմութեան թիւներն պահանջելով տղամարդուց:

Խնդիրը փոխուում է, երբ խօսքը գալիս է բանուոր դասակարգին: Այստեղ ընդհակառակն կը նոյն պէտք է աղատել չափազանց ծանր աշխատանքից: Այնտեղ ուր կինը սուր է գնում գործարանի մէջ՝ ընտանեկան կեանքի մասին խօսք անգամ չի նշել չէ կարող: Իսկ առարկել, թէ անհրաժեշտ չէ որ կինը գործարաններում աշխատէ, կնշանակէ դադարի չունենալ բանուոր դասակարգին ճշող կարիքի մասին: Տեսնում աղական լինելը խիստ հրապուրիչ բան չէ կանանց հիմար, սակայն եթէ լինէր իսկ՝ դուրսը կմնային այնու ամենայնիւ 600,000 կանայք: որոնց համար չի կարելի գործ գտնել տղաներում: Նորա ստիպում են գործարաններում աշխատել, և այն օրէնքի սահմանած չափից աւելի հետեանքը անկումն է թէ առողջապահական և թէ բարոյական տեսակետից: Թէ գործարանական կեանքը ինչքան նպաստում է անբարոյականութեան դարգանալուն և թէ ինչպիսի հրեշտակ որ ընթացք են ցոյց տալիս այս նկատմամբ գործարանատէրերից ու մանք՝ յայտնի է ամենքին: Այս զեղծումների առաջին աննշու համար պէտք է վերահսկողներ պետութեան կողմից քննիչներ նշանակել: աշխատել որ օրական 10 ժամ պարապմունքը Փերմանիայում ևս օրէնք դառնայ: ինչպէս Անգլիայում է և զանցառութիւն և աւելի խստիւ պատժուի: պէտք է համայնական ոգի մտցնել բանուոր կանանց մէջ և սովորեցնել նոցա ընկերական ուժով իրենց շահերին պաշտպան հանգիստնալու:

Բարձր դասակարգի կինը չափից աւելի պակաս ցածր դասակարգինը չափից աւելի շատ է ծանրաբեռնուած աշխատանքով: ուստի առաջինը պէտք է երկրորդի բեռից մի մաս իւր վրայ առնէ: Այդ նպատակին հասնելու համար պէտք է այժմեան կրթութեան եղանակը բոլորովին կերպարանափոխել և գեղարուեստական ուսմանց փոխարէն տալ կնոջ այնպիսի ուսումն, որ նորան պէտքական է դարձնում համայնական կեանքի համար: Համայնական խնդրի խաղաղ լուծմանը նպաստել կարող է միայն նա, որ պատրաստ է կարիքը պահանջած ժամանակ իւր անձը և իւր սեփական բաղդը զոհ բերելու: — Եւ տեսնում են բուռն, անկեղծ ծափահարութիւններ:

Այս տարուայ համաժողովը հետաքրքիր նիւթ շատ է ընծայել: ինչպէս օր. ուսուցչապետ Փուրրերի բանաստեղծութիւնը՝ բնական գիտութիւնները և համայնական շարժումը ներկայումս վերստին օրի մասին լրագրութեան մէջ բաւականաչափ փնտրանքութիւններ եղան: բայց նա իւր

զխաւոր յաջողութիւնը պարտական է Տիկին Գնաուկի ճառին: Ահա թէ ինչպէս է նկարագրում վերջինիս թողած տպաւորութիւնը անասուններից մէկը, որ առհասարակ շատ գոհ է մնացել համաժողովից:— «Մեր բոլորի սիրտը գոյի մէջ էր, երբ սենք հագած դժգոյն տիկինը, սե գլխանցով՝ ամբիոնի վերայ բարձրացաւ: «Մի կնոջ բերանից ելած առաջին խօսքն այստեղում շնորհակալութեան խօսք պէտք է լինի» — արդէն այդ սկսուածքը սրտաշահ էր, այլևս ոչ մի աւելորդ վերուն բառ՝ նա իսկոյն բուն նիւթին անցաւ... Ժողովականները երկար ժամանակ լռութիւն էին պահում, շնայելով պատուական խօսքեր շատ արտասանուեցան: բայց տակաւ առ տակաւ շատանում էին հաւանութեան բացահանութիւնների, և վերջերում մի քանի տեղ որոտագին ձայների բնաւորութիւն ընդունեցին: ճառախօսը ընդհատում էր և կարծես թէ թեւացած ու սիրտ առած կրկին շարունակում: մինչև որ հաւանութեան ձայների ահագին դողդոցով կնքեց իւր խօսքը: Մեծ ու խորհրդաւոր մի ժամ էր այդ: Պարզ ճշմարտութեան յաղթութիւնն էր այդ: Քիչ էր մնում որ մարդու աչքեր արտասուքից թրջուէին: Յաջողութիւնը կատարեալ էր: մի կին յանուն Քրիստոսի հրապարակաւ պաշտպանել էր իւր նեղեալ քոյրերի դատը: Զարգացած ձեանալու տենչը կամ սնուարծութիւնը չէին այդ կնոջ ստիպել ամբիոնի վերայ բարձրանալու: բազմութեան առաջ ելնելու: այլ խորին ցաւակցութիւնը: Նա իւր անձը բոլորովին յետ էր քաշում և իրողութիւնն էր միայն առաջ գնում: Այդ է նորա յաջողութեան գաղտնիքը: Եւ զեռասուղներ կան, որ մենք գաղափարներից զուրկ մի ժամանակի մէջ ենք դառնում:» ...

Կ. Վ.



ԵԿԵՂԵՅԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ԿԱՐԺԱԿ ԵԿԵՂԵՅԻ

Խաղական կառավարութիւնը սկսում: 20-ին նոր տօմարով, տօնեց Հոռոմի առման 25—ամեակը: Այդ յօրեկեանը մեծ հոգսեր էր պատճառում Վատիկանում: որովհետեւ կարծում էին թէ ազգային այդ տօնախմբութիւնը պէտք է ուղղուած լինի եկեղեցու ընդդէմ:

Հոռոմի առումով վերջացաւ պապերի դարեւոր աշխարհային իշխանութիւնը: որի հետ ոչ պապերը և ոչ կաթողիկոս աշխարհը այս 25 տարուայ ընթացքում չէ կամենում հաշտուել: Նախորդ Պիոս IX-ի ընթացքը խաղական կառավարութեան դէմ

Թշնամական էր և նշանաւոր էր յայտնի ցոյցերով: Լեւոն XIII-ի ընթացքը թէպէտ և խաղաղասիրական է բոլոր միւս տերութիւնների հետ: Բայց ոչ Բապտիստի հետ: Այժմեան պատրի թէպէտ և խորշում է քաղաքական ցոյցերից: Բայց շարունակում է ընդդիմադրութիւնը: Հոռոմի առման յորեւեանի օրումն մասին պատր կարգադրել էր: որ եկեղեցու պաշտօնականները, ըստ կարելոյն հեռու մնան ցոյցերից և առանց ամենամեծ կարիքի այդ օրը փողոց դուրս չը գան: Օտարերկրեայ կաթողիկոսները, առանց պապի որոշ հրահանգի, ցոյցեր պատրաստեցին ընդդէմ իտալական կառավարութեան. նշանաւոր է սպանիական հոգեւորականութեան հակացոյցը: 64 բարձրագոյն աստիճանի եկեղեցականներ Սպանիոյ պրիմաս Գոնթիլէրի մոռցնորդութեամբ մի բողոքի թուղթ ուղարկեցին պապին: որի մէջ բողոքում են Հոռոմի յափշտակութեան ընդդէմ: իտալական կառավարութեան այդ քայլը « յանցաւոր յափշտակութիւն » անուանելով:

Գերմանական կաթողիկոսների ժողովը Միւնխէնում նոյնպէս բողոք յայտնեց Հոռոմի առման դէմ: այդ նոյն դժգոհութեան զգացմունքը վառ է և այլ կաթողիկոսների մէջ: թէպէտ և առանձին կերպով չարտայայտուեցաւ:

Յօրեւեանի տօնախմբութիւնը մեծ շքեղութեամբ կատարուեցաւ. Հոռոմում, որի ժամանակ բացուեցաւ և Գարիբալդիի արձանը: արձանի բացման ժամանակ իտալական նախարարացեալ Արիսպին մի ընդարձակ ճառ խոսեց: զրուատելով Բապտիստի միութիւնը, փառաբանելով նրա հիմնադիր Գարիբալդիին և յարձակուելով իտալական միութեան լըշնամիների վերայ: Այդ ճառը վատ տպաւորութիւն է գործել Ատտիկանի վերայ և ինչպէս լիբրմերն հաղորդում են պատր մտադիր է այդ ճառին պատասխանելու: Ատտիկանի բերան Osservatore Romano լիբրմը առ այժմ հրատարակում է Հոռոմի առման դէմ: Ատտիկան ուղարկած բողոքները սակայն ինչքան էլ կաթողիկոսները բողոքեն և պատր դժկամակի: իտալական ազգային միութեան լիբրմները վատարանեն Արիսպի ընթացքը: այնուամենայնիւ արդէն պատմական իրողութիւն է Բապտիստի միութիւնը և պապի աշխարհային իշխանութեան վախճանը: այդ իրողութիւնը ստիպուած են այսօր ամէնքն էլ ճանաչել:

Կաթողիկէ կղերը շարունակում է իւր ընդդիմութիւնը այն կառավարութիւններին: որոնք նորա իրաւունքները հեղհեղե խլում են: այսպէս հունգարական եկեղեցականների ժողովը, եկեղեցական նոր օրէնքների ընդունուելուց յետոյ Բուդապէստում հեռեկալ վճիռներն է կայացրել:

Ա.— Կաթողիկէ եկեղեցին պէտք է նոր դժբախտ (եկեղեցու դէմ ուղղած) օրէնքների հասկացողութիւնը այնպէս տարածէ հաւատացեալների մէջ: ինչպէս ինքն է հասկանում:

Բ.— Ծննդեան տօնախմբական և մահուան վկայականները, պէտք է գործ դրուին միմիայն եկեղեցական նպատակների համար:

Գ.— Կոնսիստորիանների վճիռները երբէք պիտի չը տրուին քաղաքական իշխանութեան ձեռքը:

Նոյնանման և այլ վճիռներ են կայացրել հունգարական եպիսկոպոսները: որոնցով անշուշտ կառավարութեան և կաթողիկէ եկեղեցու մէջ հաշտութիւն չէ կարող կայանալ:

Մի այդպիսի կռուի մէջ է և ֆրանսիական եկեղեցական կառավարութիւնը հասարակապետական կառավարութեան հետ: ապրիլ 16-ի օրէնքը, որով հարկ է պահանջուում կաթողիկէ եկեղեցու բոլոր ստացուածքներից: զրգուել է եկեղեցականներին: որոնք յայտնի ընդդիմադրութիւն են սկսել այդ օրէնքին: Լեւոն Ժ.Վ. պատր իւր խաղաղասիրական ընթացքից դուրս չբախու համար երկար ժամանակ լուծութիւն պահանջեց: Բայց և եկեղեցու շահերը պաշտպանուած լինելու համար: ահա թէ ինչ պատասխան է տուել նա ֆրանսիական միաբանութիւններից մէկի առաջնորդին: այդ պատասխանը գրել է պապի դիւանագետ Ռամպոլլան: որ ասում է. — « ես հաղորդեցի սրբազան պապին 2եր նամակի բովանդակութիւնը: նորին ս. շը հրամայեց յայտնել 2եղ: որ իւր վճիռը այդ մասին արդէն իսկ յայտնի է: այսինքն որ աչքի առաջ ունենալով ապրիլ 16-ի օրէնքը: ֆրանսիական միաբանութիւնների առաջնորդներն ազատ են այնպէս վարուելու: ինչպէս պահանջում է միաբանութիւնների շահը: » Այս պատասխանով պատր հեռացնում է իրենից պատասխանատուութիւնը: Բայց միւսնոյն ժամանակ զրգուում է միաբանութիւններին ընդդէմ կառավարութեան:

— Ֆրանսիական կառավարութիւնը մի նոր տժգոհութեան առիթ ևս տուել է եկեղեցականներին: յայտնի է որ Ֆրանսիայի Լուրդ քաղաքում մի մեծ ուխտատեղի կայ սուրբ Աստուածածնի անունով: Այդ ուխտատեղին մի այր է: որի միջից հոսում է մի աղբիւր: որին բժշկական յատկութիւն է վերագրուում: Աւխտաւորները ամէն տարի այդ աղբիւրի ջրիցը մեծ քանակութեամբ տանում են իրենց հետ: օգտուելով այդ հանդամանքից հարկահանները հարկ են դրել այդ ջրի վերայ: ուխտաւորներից շատերը վճարում են անախորժութիւնից փախչելու համար: Մի քահանայ չկամենալով վր-

ճարել այդ հարկը, գործն ընկել է դատաստանի, մեծ հետաքրքրութիւնով սպասում են այդ դատի վախճանին:

Արեւելեան եկեղեցիների միութեան խնդիրը դեռ ևս զբաղեցնում է Հոռոմի քահանայապետին, Լեոն ԺԳ-ը վճռել է եռանդով ձեռնարկել այն միութեան գործին: Պապը կարծում է որ այդ միութիւնը հնարաւոր պիտի լինի դպրոցական կրթութեան շնորհիւ: այդ պատճառով նա վճռել է մի քանի միջնական և բարձրագոյն հոգեւոր դպրոցներ հիմնել, յունական եկեղեցուն հետեղ երկրներում: այդ նպատակի համար արդէն իսկ մեծամեծ նուիրարերութիւններ են եղել: Մինչև նոր տարին լոյս կը տեսնի պապի դէպ ի միութիւն հրաւիրող կոնգակը, որի համար առանձին եռանդով նիւթեր են ժողովում: Վատիկանում: Պապը կամենում է պատմական փաստերով ապացուցանել, որ յունական հերձուածը տեղի է ունեցել թիւրիմացութիւնների պատճառով: առանձին հետաքրքրութեամբ սպասուում է այդ կոնգակը:

Վերջին օրերս Ռուսաց «Новое Время» լրագրի թղթակիցը, ընդունելութիւն է գտել պապի մօտ և այդ տեսակցութեան նկարագիրը հրատարակել է: Ռուս թղթակցի խօսքերից երևում է որ պապը հաւատում է իւր ձեռնարկած գործի յաջողութեան, իսկ նրան չընկալողները կարծում են թէ այդ բանի համար շատ ժամանակ է պէտք:

— Պապի անգլիական ժողովուրդին ուղղած կոնգակը մեծ աղմուկ է հանել, Երևան են եկել բազմաթիւ պաշտպաններ և հակառակորդներ այդ միութեան: Միաբանասէրների պարագլուխն է եկեղեցական միութեան նախագահ լորդ Հալիֆաքսը, որի շուրջը համախմբուած են այն մարդիկ, որոնք ոգեւորուած են իւր-իւր գաղափարով, որոնք չեն կամենում վիճարանութեան մանրամասնութեան մէջ մտնել: առ այժմ առաջարկում են ընդհանուր աղօթքով միանալ, իսկ միւս բաների համար դեռ ժամանակ կը լինի: Հակառակ բանակի գլուխն է Անգլիական եկեղեցու գլուխ Բէնէթըրիի արքեպիսկոպոսը, որ պատասխանել է պապի կոնգակին: Այս վիճարանութիւնը դեռ շարունակուում է և պապը դո՛հ է որ խնդիրը այդպիսի մեծ աղեղնութիւն է ունեցել:

ՕՐՊԱՌԳԱՆ ԵՒ ԵՂԵՑԻ:

I

ՅՈՒՆԻԱՆ ԵՒ ԵՂԵՑԻ:

Պապի միաբարական ձգտումների հետեանքը

արդէն իսկ երևան է դալիս: Այն մարդիկ որ չեն կամենում հաւատալ Հոռոմի անեկեղծութեան միշտ առաջ են բերում կաթոլիկ կղերի նենդաւոր ընթացքը, գորան ապացոյց կարող է ծառայել վերջերս Չիւսիայում պատահած հետեւեալ դէպքը: Հոռոմից եկել են 3 կաթոլիկ քահանայ, որոնք աղօթող յոյն են և Հոռոմում պատրաստուած են եկեղեցու միութեան գործին ծառայելու: Սորանց արտաքին զգեստը բոլորովին նման է յունականին, սորանք եկեղեցական բոլոր արարողութիւնները կատարում են յունական լեզուով և ձեռով: աղօթքների և պաշտամունքի մէջ բոլորովին հետեւում են յունական եկեղեցուն: միայն աւելացնելով «բղիսումն ի Հօրէ և յուր-ւ-ն» ճիշդ այնպէս ինչպէս հայածէս կաթոլիկները: Յունական եկեղեցու բազմաթիւ արարողութիւններին ծանօթանալու համար, զորք անշմարելի կերպով մուտք են գործել և եկեղեցու դասը և օգուտ քաղելով յոյն քահանաների միամտութիւնից, սկսել են վարդապետել նրանց Հոռոմի գերիշխանութիւնը: Այս միաբար խռովարարների գէ՛մ Չիւսիայի յոյն եպիսկոպոսը վերջերս մի շատ խիստ հովուական է արձակել զգուշացնելով իւր հօտը յափշտակիչ գայլերից:

II

ՌՈՒՍԱՅ ԵՒ ԵՂԵՑԻ:

Ռուսաց եկեղեցու առաքեալ քարոզիչները կամենալով աւելի սերտ կապել օրթոդոքս եկեղեցու հետ օտարազգի դաւանակիցներին, վերջին ժամանակներս առանձին եռանդով ձեռնարկել են Ս. զրբերի և եկեղեցական մատենաների թարգմանութեան այն ազգերի լեզուով, որոնց մէջ գործում են: Արդէն ժամերգութիւններ են տեղի ունենում Լաբուտերէն, Ֆինլերէն և Ճափոներէն:

Ճափոնիայում առանձին եռանդով գործում է ռուս նիկողայոս եպիսկոպոսը, որ ձեռնարկել է ս. զրբերի և պաշտամանց զրբերի նոր թարգմանութեան: այդ թարգմանութեան և առ հասարակ Ճափոնական օրթոդոքս եկեղեցու մասին վերջին ժամանակներս ընդարձակ տեղեկութիւններ է տալիս Ռուսաց պաշտօնական «Եկեղեցական համալսարներ»:

Ռուսաց թեմական իշխանութիւնները առանձին կերպով հոգս են տանում կարօտ եկեղեցականների վիճակի մասին: Վարօնէժի եկեղեցականների թեմական ժողովը, վճռել է այս տարի հիմնել մի պատանարան 25 հոգու համար: Եկեղեցական այդ պատանարանի մէջ պէտք է խնամարկուին անկեալ և օգնութեան կարօտ եկեղեցական պաշտօնականները:

Սամարայի թեմական եկեղեցական ժողովի մէջ, թեմակալ առաջնորդի առաջադրութիւնների համաձայն քննուել են հետեւեալ խնդիրները՝

Ա.—Միջոցներ գտնել առաջն առնելու եկեղեցական արարողութիւնների անվճար պահպանութեան և քահանաների իրենց պաշտօնը սրբութեամբ կատարելու համար:

Բ.—Եկեղեցականների միմեանց հետ և ժողովուրդի հետ ունեցած յարաբերութիւններից ծագող գայթակղութիւնները բառնալու խնդիրը: Նոյն այդ ժողովի մէջ քննութեան են առնուել և հետեւեալ առաջարկութիւնները:

Ա.—Կարելի չէ՝ արդեօք թեմական մամի գործարանին կից՝ եկեղեցական անթմների պահեստ ունենալ:

Բ.—Պէտք չէ՝ արդեօք թեմական եկեղեցիներում գործածուող զինու համար մի մասն ունենալ զուտ խաղողի զինի մատակարարելու: որպէս զի եկեղեցիներում գործ չգրուին խաղախած զինանիք:

Դպիրներ պատրաստելու համար դասարաններ պահելը ժողովը մերժել է: առարկելով որ ուրիշ թեմերում եղած այդպիսի դասարանները փակուել են կարիք չլինելու պատճառով: Ժողովը վճռել է բարեկարգիչների յանձնախումբ կազմել եկեղեցական բարեկարգութեան վերայ հսկելու և եկեղեցականների մէջ եղած մանր վէճերը վճռելու համար:

Ռուսական եկեղեցականների համար մի նոր ասպարէզ է բացուում: «*Հիմա*» տների և հողաբարձութիւնների հաստատումով: Նորին Կայսերական Մեծութեան Թագուհի և Կայսրուհի Ալեքսանդրա Ֆեօդորովնայի խնամքի տակ սեպտեմբրի 1-ին րացուին առանձին աշխատանքի տներ, որոնք պիտի օգնութեան հասնեն տնայիններին: անգործ բանուորներին և բանտերից և տաժանակիր աշխատանքից ազատուածներին: այս տների մասին հողացող հողաբարձութիւնների մէջ անշուշտ մեծ դեր ունին և եկեղեցականները:

Առաջիկայում աշխարհագիր պիտի լինի ամբողջ Ռուսիայի ժողովրդոց: այս առթիւ ներքին գործոց նախարարի շրջաբերականը հրաւիրում է բոլոր պաշտօնականներին նպաստել աշխարհագրի յաջողութեան: համոզելով ժողովուրդին որ աշխարհագրի նպատակը ոչ հարկերի ծանրացնելն է և ոչ թեմեակացնելը: այլ Ռուսաստանի բնակիչների թիւն ստուգելը: «*Եկեղեցական համբաւարերը*» գործակցութեան է հրաւիրում և եկեղեցականներին: որոնց խօսքին ժողովուրդը: աւելի շուտով կարող է

հաւատալ և որոնք այդ գործի մէջ աւելի մեծ ծառայութիւն կարող են անել կառավարութեան:

III

ԲՈՒՂԱՐԱՐԱՆ ԵՆԵՂՆԵՐ

1870 թուի ֆերմանով Կ. Պօլսի կառավարութիւնը ճանաչել է Բուլղարական Էքզարքոսի իրաւունքները Բուլղարիայում և Մակեդոնիայում: Չնայելով տիեզերական պատրիարքարանի բողոքներին, բուլղարական Էքզարքոսը մինչև վերջին ժամանակներս վայելել է Մակեդոնիայում եպիսկոպոսներ նշանակելու իրաւունքը: Այսօր Մակեդոնիայի 6 թեմերում եպիսկոպոսներ նշանակելու խնդիրը կրկին յարուցուել է և Դուռը չէ վճռել թէ որի իրաւունքը պէտք է պաշտպանէ: պատրիարքի թէ էքզարքոսի: Յայտնի է որ Մակեդոնիան ասպարէզ է յունական և բուլղարական ազդեցութիւնների կռուին: այս տարի առաջացած քաղաքական շարժումները և Մակեդոնիայում ծագած ապստամբութիւնը վայելում է բուլղարների համակրանքն ու պաշտպանութիւնը: ուստի և Սուլթանը դեռ ևս չէ համաձայնել իրաւունք տալու էքզարքոսին բուլղար եպիսկոպոսներ նշանակելու:

ԲՈՂԱՐԱՐԱՆ ԵՆԵՂՆԵՐ


Ե Մ Ե Ր Ի Կ Ա

40 տարուց ի վեր Ամերիկայում մի շարժում է սկսուել հարեցողութեան ընդդէմ: այդ շարժման մասնակցում են բոլոր եկեղեցիները: մեթոդիստները, երիցականները, բէֆօրմիստները, լուտերականները, եպիսկոպոսականները, մինչև անգամ կաթոլիկները:

Այդ շարժման նպատակը չէ չափաւորութիւնը: այլ բացարձակ ժուժկալութիւն: «*Երգեկանները*» (Prohibitioniste) պահանջում են որ արգելուի ոգելից խմիչքների պատրաստութիւնը և վաճառումը: Անպայման ժուժկալութիւնը համարուում է աղբիւր երջանկութեան: եկեղեցիների մէջ նոյնն է քարոզուում ինչ որ գուրաը: հրապարակների վերայ: նոյնը ընտանիքներում և դպրոցներում: Գարողիչները և քարոզչուհիները չըմում են ամենուրեք: վիճակագրական տեղեկութիւններով և ս. Կրքից առած օրինականութիւնով ի քարոզների մէջ: աշխատում են նոր համոզել իւրեանց ունկնդիրներին որ խմիչք գործածելը պատճառ է մարդու թշուառութեան: սովորաբար այդպիսի քարոզներ լսող ժողովներից յետոյ ստորագրութիւն են առնում ունկնդիրներից որ նրանք հրաժարուում են խմելուց: սակայն այդ ստորագրութիւնները մնում են միայն թղթի վերայ: որովհետև հրապարակական ստորագրութեան

միջոցին ամենքն էլ ստորագրում են վախենալով Հարրեցոյի անուն ժառանգելուց, իսկ ժողովից յետոյ գնում և անմիջապէս թարմանում են խմիչքներով: Ժուժկալութեան քարոզիչները այն աստիճանի հակառակութեան են հասել, որ հաղորդութեան գինի անգամ գործ չեն գնում: առարկելով որ աւետարանի մէջ ասած գինի բառը հիւթ կը նշանակէ, ուրիշներն սպառնացանում են որ նոյն գինու դերը հաղորդութեան մէջ ջուրը կարող է կատարել: Հատերը խմիչք գործածելու հետ հալածում են նոյնպէս և ծխելը. ուստի և յաճախ պատահում է, որ իւր տան մէջ ծխող պատարն անգամ արձակում է պաշտօնից: Գպրոցների մէջ մանուկներին շարունակ քարոզուում է որ խմիչք գործածելը մի յանցանք է սեփական անձի, ընտանիքի և հասարակութեան ընդդէմ: Ամերիկական գպրոցներում տարեկան հարցաքննութիւններէից յետոյ, աշակերտները հրապարակական բանախօսութիւններ են անում այս բանախօսութիւնների մէջ առաջին տեղը բռնում են ժուժկալութեան դէմ ուղղած փիլիսոփայական ծառերը, որոնք ըստ մեծի մասին թուժակօրէն կրկնուող բառերից ու մտքերից են բաղկացած:

Ն. Բ.



ԳՐԱԿԱՆԱԿԱՆ—ՊԱՏՄԱԿԱՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՍԵՍԱՆԵԱՆ ՏԵՐՈՒԹԵԱՆ.

Թ. Ն. Ը. Օ. Դ. Զ. Զ. Ի.

(Եարունակութիւն) *

Հայուհի որդի Որմնզը (Հորմնզը Օրմնզը) Ա. սկսաւ կառավարել 272 թուի վախճանին կամ 273-ի սկզբին: Երգէն իրրե թագաժառանգ արիութեամբ կուռել էր հռովմայեցւոց ընդդէմ և աւանդութիւնը նրան տուել էր «Է-դ-ն» անունը: Զանազան առասպելների հետ միասին աւանդում են նրա մասին և այն, որ զահը բարձրանալուց առաջ կուռակալ է եղել Խորասանում (ամբողջ հիւսիս արեւելեան գաւառներում): Ինչպէս թագաւոր մեծամեծ գործեր կատարելու համար հազիւ կարող էր նա առիթ ունենալ, որովհետեւ միայն մի տարի թագաւորեց:

Որմիզդին յաջորդեց Բահրամ (Վարահրամ—Վահրամ). Ա. որ նորա որդին չէր, ինչպէս ասում է աւանդութիւնը, այլ համաձայն մի արձանագրութեան՝ եղբայրը, Նա պէտք է մի մեղէկ զուարճատէր թագաւոր եղած լինի: Մանին սիրտ

առաւ նրան մօտենալու, բայց զրադաշտական հոգեւորականները կամ մոգերը կարողացան վճիռ կայացնել տալ նրան սպանել և մորթեղերձ անելուց յետոյ նորա խրտուիլակը կախ անել տալու: Սա կառավարեց մօտաւորապէս 274—277 թ.:

Բահրամ Բ-ի (մեծաւորապէս 277—294 թ.) մասին որ Բահրամ Ա-ի որդին է, պարսկական աւանդութիւնը գրեթէ ոչինչ չը գիտէ: Հաւանօրէն սրանից են ծագում այն երկու դժբաղդարաբշտ վնասուած ժայռերի արձանագրութիւնները, որ բոլորովին կրօնական, մինչև անգամ քարոզանման բովանդակութիւն և խիստ կղերական ուղղութիւն ունենան: Պրորոս (276—282) կայսրը սորա հետ մի անգամ խաղաղութեան դաշն է կապել: 2 որից նախընթաց պատերազմների մասին մենք տեղեկութիւն չունինք: Նախ քան որ Պրորոսը կարողանար պատերազմը վերսկսել սորա հետ, սպանուեցաւ: Բայց Կարոս կայսրը առաջ տարաւ Պրորոսի դիտաւորութիւնը (283 թ.), առաջ անցաւ մինչև թշնամի տէրութեան մայրաքաղաքը, առաւ Տիգրոնը և Քոսէն (Սելեւկիայի մի մասը). այս նուագ պարսկներին օգնեց կայսեր յանկարծական մահը, որ մեռաւ իրրե թէ կայծակի հարուածից:

Սրանից յետոյ ինչպէս երևում է հռովմայեցիք առանց մեծ կռիւների յետ են դարձել: Յատկապէս յիշատակուում է, որ Կարոսի յաջորդութիւններին նպաստեցին պարսկների ներքին վեճերը: Ըյս շրջանն առանձնապէս հարուստ էր այսպիսի վեճերով: սակայն մենք այս մասին տեղեկութիւններ չունինք: Մի հետոյ յիշատակում է 291 թ. իշխան Որմիզդի (Ormis) ապստամբութիւնն իւր եղբոր դէմ բարբարոս ազգերի աջակցութիւնով:

Ըյն պատանի որդին, որի պատկերը Բահրամ Բ-ը իւր զրամների վրայ իւր ամուսնու դիմացը զրօշմել է տուել, երեւի երբեք կառավարութեան չէ հասել: Նրա մահուանից յետոյ հաւանօրէն երկու հակառակորդներ կուռում էին զահի համար: Բահրամ Գ-ը, որ երեւի Որմիզդի որդին էր և նարսեզը, որ մի արձանագրութեան նայելով՝ Հայուհ Ա-ի որդին էր: Յամենայն դէպս Բահրամ Գ-ը, որ արգէն իրրե թագաժառանգ կուռակալ էր Սագաստանի (այժմ Սիստան), տէրութեան հարաւ արեւելեան կողմում: ուստի և կոչում էր Սագան-Շահ, «Սակերի թագաւոր», շատ կարճ ժամանակ միայն իշխեց:

1. Բահրամ Ա-ից մինչև Եայուհ Բ-ի զան բարձրանալը թագաւորների կառավարութեան տարիները չեն կարող առանձնապէս ստոյգ համարուի: Երկու տարուան սխալ այդ տարեթուների մէջ մեծաւ կարելի է ենթադրել:

2 Vopiscus, Probus, 17. Որ «Narseus» անունը մօտեցնող խառնել է Բահրամի նետ, արդէն Տիւլամնիզ գիտել:

* Տես. Արարատ համար Ը. եր. 287—292: